

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
Վ. Գ. Ղ., պրոֆեսոր
Պ. Ս. Ավետիսյան
«18» հունիսի 2022թ.



ԿԱՐՏԻՔ

Կարեն Իշխանի Սարոյանի «Հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխկապվածության կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2022 թվականի հունիսի 18-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 09-21/1):

Մասնակցում էին՝

Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Ներսեսյան Կարեն Վասիլիի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝ տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, Չախոյան Էլիզա Միքայելի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Կարապետյան Էդգար Գագիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Քառյան Արա Վլադիմիրի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Հայրապետյան Վիկտորիյա Լեննիդի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Հանիսյան Հրայր Հովիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Պետրոսյան Իրինա Բորիսի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, Տիգրանյան Վարսիկ Իշխանի, տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Մնացականյան Լիդա Արմենի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հակոբյան Էսթեր Աշոտի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Պետրոսյան Գարիկ Արմենակի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հակոբյան Արմինե Արզումանի՝ ավագ դասախոս, Աղաջանյան Արմինե Վլադիմիրի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Գալստյան Անի Համլետի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Նաչիկյան Լիլիա Աշոտի՝ ավագ դասախոս, Սարգսյան Լիլիթ Կարենի՝ դասախոս, Կարապետյան Անուշ Արմենի՝ ասիստենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարկերի դերի և էության, դրա՝ տնտեսության վրա ունեցած ազդեցության, հարկային բեռի արդյունավետ կառավարման վերաբերյալ ուսումնասիրություններ սկսել են կատարել դեռևս վաղ ժամանակներից և մինչև այժմ էլ այդ ուսումնասիրությունները տարածված բնույթ են կրում: Դա պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր պետության արդյունավետ գործառնության համար անհրաժեշտ պետական եկամուտների ձևավորման հիմքում ճշգրիտ մշակված հարկային քաղաքականությունն է, որի շրջանակներում մեծ կարևորություն են ստանում, հատկապես, հարկային բեռի արդյունավետ կառավարումը, ինչպես նաև հարկային բեռի և տնտեսության ակտիվության միջև փոխազդեցության հիմնախնդիրը:

Հարկային բեռը և տնտեսական աճը մշտապես բարդ փոխազդեցության մեջ են գտնվում: Մի կողմից հարկային բեռի բարձրացումը խոչընդոտում է տնտեսավարող սուբյեկտների ձեռնարկատիրական գործունեությանը և հանգեցնում տնտեսական ակտիվության թուլացման, մյուս կողմից՝ բարձր հարկային բեռը մեծացնում է պետական եկամուտները, որոնք ուղղվում են պետական ծախսերին և բազմարկչի ազդեցությամբ մեծացնում տնտեսական աճը: Այս տեսանկյունից ներկայումս մեծ կարևորություն է ստանում ՀՀ-ում հարկային բեռի օպտիմալ մակարդակի գնահատումը, այսինքն՝ հարկային բեռի այն մակարդակի, որն ապահովում է հարկային եկամուտների և համախառն արտադրության ծավալի այնպիսի լավագույն համադրություն, որի դեպքում հարկային բեռի մակարդակի սահմանային կամ լրացուցիչ տոկոսային աճն արդեն կհանգեցնի բացասական տնտեսական աճի:

ՀՀ պետական պարտքը շարունակական աճում է և դրան զուգահեռ մոտենում է նախկինում կուտակած պարտքի սպասարկման ժամանակը, ինչը պետությանը դրդում է մեծացնել հարկային բեռի մակարդակը՝ հարկային եկամուտների բազայի ավելացման միջոցով: Այս ամենն անշուշտ առաջ է բերում հարկային բեռի արդյունավետ կառավարման հիմնախնդիր, որի շրջանակներում մեծ կարևորություն են ստանում ճիշտ մշակված օրենսդրական փոփոխությունները, որոնց նպատակը պետք է լինի հարկային մուտքերի

ծավալների ընդլայնումը՝ տնտեսության վրա հնարավոր նվազագույն բացասական ազդեցություն կիրառելով:

Վերը նշված հանգամանքները հիմնավորում են, որ քննարկվող թեման ներկայումս արդիական է համարվում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է ՀՀ-ում հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխազդեցության մեխանիզմների բացահայտումը: Նշված նպատակին հասնելու համար հետազոտությունում առաջ են քաշվել և լուծվել հետևյալ խնդիրները.

1. Ի մի են բերվել հարկային բեռի և տնտեսական աճի վերաբերյալ տնտեսագիտության մեջ առկա կարևոր մոտեցումները, ինչպես նաև հարկային բեռի գնահատման և կառավարման հիմնական առանձնահատկությունները:

2. Քննարկվել է առանձին երկրների հարկային համակարգերի միջազգային փորձը՝ միաժամանակ զուգահեռ անցկացնելով ՀՀ հարկային համակարգի հետ:

3. Ուսումնասիրության են ենթարկվել ՀՀ հարկային համակարգը, դրա հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև դրա դերը հարկային բեռի ձևավորման և կառավարման գործում:

4. Հարկային բեռի իրական մակարդակը որոշելու նպատակով կառուցվածքային հավասարումների մոդելավորման MIMIC մոդելի միջոցով գնահատվել է ՀՀ-ում ստվերային տնտեսության մակարդակը և ուսումնասիրվել է հարկային արտոնությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում:

5. Տնտեսության վրա հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների ազդեցությունը վերլուծելու նպատակով տնտեսաչափական SVAR մոդելի միջոցով գնահատվել են ՀՆԱ-ի ծախսային բազմարկիչների մեծությունները:

6. Դիտարկվել են ՀՀ առանձին հարկատեսակները, դրանց գծով հարկային բեռի ազդեցությունը տնտեսության վրա, ինչպես նաև էկոնոմետրիկական մոդելի միջոցով գնահատվել է ընդհանուր հարկային բեռի և տնտեսական աճի միջև փոխազդեցությունը:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացված վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից ըստ հեղինակի գիտական նորոյթն արտացոլող հիմնական դրույթներն են.

1. Առաջ է քաշվել իրական հարկային բեռի գաղափարը, որի մեծության հաշվարկման շրջանակներում կառուցվածքային հավասարումների մոդելավորման MIMIC մոդելի միջոցով՝ նոր մոտեցումով, գնահատվել է ստվերային տնտեսության մակարդակը ՀՀ-ում 2001-2021 թթ. ժամանակահատվածում:
2. Տնտեսաչափական SVAR մոդելի միջոցով գնահատվել է հարկաբյուջետային բազմարկիչների մեծությունը ՀՀ-ում, որոնց միջոցով ցույց է տրվել, թե ինչպես արդյունավետորեն կառավարել հարկային բեռը՝ հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցող փոփոխության ժամանակ:
3. Տարբեր կառուցվածքային մոդելների միջոցով գնահատվել է առանձին հարկատեսակների գծով հարկային բեռի՝ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության բնույթը ՀՀ-ում, ինչի արդյունքում պարզվել է, որ շահութահարկի, ԱԱՀ-ի, ինչպես նաև շրջանառության հարկի գծով հարկային բեռը հիմնականում բացասաբար է ազդում տնտեսության վրա, իսկ ակցիզային հարկի, բնապահպանական հարկի, և որոշ դեպքերում նաև եկամտային հարկի գծով հարկային բեռը մեծամասամբ դրական ազդեցություն կարող է գործել տնտեսության վրա:
4. Հարկային բեռի և տնտեսական աճի փոխազդեցության շրջանակներում տնտեսաչափական մոդելի միջոցով հաշվարկվել և գնահատվել է օպտիմալ հարկային բեռի մեծությունը ՀՀ-ում, ինչի արդյունքում բացահայտվել է, որ ՀՀ-ում հարկային բեռի մակարդակը ցածր է իր օպտիմալ մակարդակից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ տեղ գտած կարևոր մտքերն ու գաղափարները, ինչպես նաև հիմնական գիտական արդյունքները կարող են խորհրդատվական հիմք ծառայել պետության կողմից մշակվող հարկային քաղաքականության կատարելագործման, հարկային բեռի արդյունավետ կառավարման, ինչպես նաև առկա հարկային բեռն իր օպտիմալ մակարդակին հասցնելու համար: Ատենախոսությունում տեղ գտած որոշ մտքեր կարող են հետաքրքրություն ներակայացնել նաև տվյալ թեմայով զբաղվող ինչպես հայաստանյան, այնպես էլ օտարերկրյա հետազոտողների, համալսարանների ուսանողների և այլ անձանց համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 146 էջի վրա (առանց հավելվածների) և ներառում է 22 աղյուսակ, 18 գծապատկեր և 11 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Հարկային բեռի տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում ժամանակագրական կարգով ներկայացվել է հարկերի և տնտեսական աճի վերաբերյալ տարբեր տնտեսագիտական ուղղությունների, դպրոցների և առանձին հեղինակների բնորոշումները, ուսումնասիրվել է հարկային բեռի գնահատման և կառավարման առանձնահատկությունները:

Առաջին գլխում անդրադարձ է կատարվել նաև հարկային համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրությանը՝ քննարկելով Ռուսաստանի, Գերմանիայի և Վրաստանի հարկային համակարգերը և դրանց հիմնական առանձնահատկությունները:

Առաջին գլխում ուսումնասիրությունը եզրափակվել է ՀՀ հարկային համակարգի քննարկումով: Այստեղ ներկայացվել են ՀՀ հարկային համակարգի հիմնական առանձնահատկությունները, քննարկվել է հարկային համակարգի հիմքը կազմով հարկային օրենսդրությունը, դրա ազդեցությունը ՀՀ հարկային բեռի ձևավորման և փոփոխության վրա, ինչպես նաև անդրադարձ է կատարվել այն միջոցառումներին, որոնցով ՀՀ հարկային համակարգը արձագանքել է կորավիրուսային համաճարակի և 44-օրյա պատերազմի թողած բացասական տնտեսական հետևանքներին:

Արենախոսության երկրորդ՝ «ՀՀ իրական հարկային բեռի գնահատումը և հարկային օրենսդրության փոփոխության հետևանքների վերլուծությունը ՀՀ տնտեսությունում» գլխում գնահատվել է իրական հարկային բեռի մակադակը ՀՀ-ում, ինչպես նաև իրականացվել է ՀՀ տնտեսության վրա հարկային օրենսդրության փոփոխության հետևանքների վերլուծություն:

Արենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսության վրա հարկային բեռի ազդեցության գնահատումը» գլխում հեղինակը գնահատել է առանձին հարկատեսակների գծով հարկային բեռի ազդեցությունը ՀՀ տնտեսություն վրա, ընդհանուր հարկային բեռի և տնտեսական ակտիվության փոխազդեցությունը՝ վերլուծելով օպտիմալ հարկային բեռը ՀՀ-ում:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության վերաբերյալ հիմնական եզրակացությունները և կատարվել համապատասխան առաջարկություններ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են մի շարք թերություններ և բացթողումներ, որոնցից առավել նշանակալիները նշված են ստորև:

1. Ատենախոսության 2-րդ նորույթը վերաբերում է SVAR մոդելի միջոցով ՀՀ-ում հարկաբյուջետային բազմարկիչների մեծության գնահատմանը: Սակայն, ՀՀ հարկաբյուջետային բազմարկիչները նախկինում էմպիրիկ եղանակով գնահատվել

են մի շարք այլ հեղինակների կողմից: Օրինակ՝ Ս. Լազարյանի և Մ. Յուլիանայի կողմից 2018թ.-ին¹, Գ. Մինասյանի կողմից 2017թ.-ին², Ռ. Ռոզենովի և Վ. Ջանվելյանի կողմից 2015թ.-ին³: Ավելին, ատենախոսությունում չի հիշատակվում այս աշխատանքների մասին և չի նշվում, թե հեղինակի կողմից կատարված գնահատումը ինչով է տարբերվում և ինչով է նոր: Հետևաբար, կարծում ենք, բազմարկիչների մեծության գնահատումը չի կարող ներկայացվել որպես գիտական նորույթ:

2. Ատենախոսության 2.1 բաժնում ներկայացվում է հեղինակի կողմից «իրական հարկային բեռի» գնահատումը (որը հանդիսացել է առաջին գիտական նորույթի հիմքը): Դա իրականացնելու համար հեղինակն առաջարկել է յուրովի մոտեցում, որը հիմնվում է հարկեր/ՀՆԱ գաղափարի վրա, և առաջարկվում է ՀՆԱ-ն ճշգրտել «սովերային տնտեսության մասնաբաժնի» և «հարկային արտոնություններով ձևավորված եկամուտների չափով»: Սակայն հեղինակը հաշվարկներում թույլ է տվել որոշ սխալներ, որոնք կարող են հանգեցնել իրականությունից տարբերվող արդյունքների և կասկածի տակ են դնում ընտրված մեթոդի արդյունավետությունը: Մասնավորապես՝ ՀՆԱ-ից «հարկային արտոնություններով ձևավորված եկամուտները» նվազեցնելու համար հեղինակը վերցրել է ՀՀ ՊԵԿ կողմից գնահատված հարկային ծախսերի ցուցանիշը և այդ չափով նվազեցրել է ՀՆԱ-ն: Ստացվել է, որ ՀՆԱ-ից հանվել են չստացված հարկային եկամուտների ցուցանիշը, մինչդեռ ՀՆԱ-ից պետք էր հանել հարկման բազան, որը արտոնության արդյունքում չի հարկվում: Օրինակ, առողջապահություն ոլորտը ԱԱՀ-ից ազատելու արտոնությունը առաջացրել է հարկային ծախս, որն 2020թ. կազմել է շուրջ 49.8 մլրդ դրամ (ըստ ՀՀ 2020թ. բյուջետային ուղերձի, որտեղից և օգտվել է հեղինակը):

¹ Lazaryan S. S., and M. A. Elkina (2018), "Estimation of the Government Expenditures Multiplier in the Republic of Armenia," *Financial Journal*, no. 4, Financial Research Institute of RF, in Russian.

² Գ. Մինասյան (2017), «Պետական ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա (ՀՀ տվյալներով)», ատենախոսություն

³ Rozenov R., and V. Janvelyan (2015), "Fiscal Multipliers in Armenia," *Republic of Armenia. Selected Issues*, IMF Country Report no. 15/66.

Հեղինակը ՀՆԱ-ի ցուցանիշից հանել է այդ 49.8 մլրդ դրամը, այնինչ, պետք էր ՀՆԱ-ից հանել հարկման բազան՝ առողջապահության ոլորտի ավելացված արժեքը: Ամբողջ հարկային ծախսերի գծով կատարված այս բացթողումը շեղում է ստացված արդյունքը:

3. Հաշվարկներում կիրառվել են ոչ համադրելի ցուցանիշներ: Մասնավորապես, 2018թ. հարկային եկամուտների՝ ըստ հարկատեսակների ցուցանիշները վերցվել են ՀՀ ՊԵԿ տվյալների բազայից, որոնք պարունակում են անցումային գերավճարները, իսկ հաջորդող՝ 2019-2020 թվականներին ցուցանիշներում այդ գերավճարները զտված են: Այս առումով ցանկալի է 2018-ի ցուցանիշներից նույնպես զտել անցումային գերավճարները:
4. Եկամտային հարկի դրույքաչափի փոփոխության ազդեցությունը գնահատելու համար, հեղինակը ենթադրել է, որ աշխատողները տնօրինվող եկամտի փոփոխության չափով կճշգրտեն իրենց սպառումը: Սակայն, պետք է հիշել, որ եկամտային հարկի արդյունավետ դրույքաչափի նվազում տեղի է ունեցել բարձր եկամուտ ստացող աշխատողների համար, որոնց դեպքում սպառման սահմանային հակումն ավելի փոքր է (եկամտի աճին զուգընթաց սպառման սահմանային հակման նվազման մասին նշել է նաև հեղինակը աշխատանքի 101-րդ էջում): Այս գործոնը հաշվի առնելու պարագայում ստացված արդյունքները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված եզրահանգումները այլ կլինեին:


ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարեն Սարոյանի «Հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխկապվածության կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը հանդիսանում է ընտրված թեմայի վերաբերյալ խորը և համապարփակ վերլուծություն՝ հարուստ էմպիրիկ հետազոտական և վերլուծական աշխատանքով:

Շտապագիտության հիմնական արդյունքները հրապարակվել են 8 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Կարեն Իշխանի Սարոյանի «Հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխկապվածության կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով թեկնածուականատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուականատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.02 - «**Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում**» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝



Է. Մ. Սանդոյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝



Մ. Ա. Ոսկանյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ի. Բ. Պետրոյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու



Գ. Ա. Պետրոյան

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ռ. Ս. Կասաբաբովա